


176

6 II. 2



Համակրում են, զգուժում են թէ Հասարակական բոլոր Հարցերում մի և նոյն Համոզմունքներն ունեն, ամեն բանում իրար մէջ սերտ և անխզելի կապերով են կապված, ամեն բանում Համակարծիք են.... Այո, իրար Հանդիպելով՝ անմիջապէս Համոզվում են թէ մի և նոյն դպրոցից են դուրս եկել....

Եւ եթէ այս րօպէիս մենք կը կարողանանք կատարելապէս Համոզվել, թէ մեր գործունէութեան 19 տարվայ ընթացքում մենք այդ տեսակ շօշափելի հետեւներին ենք հասել,—մենք փստահութեամբ կասենք թէ մեզ կատարելապէս վարձատրված ենք Համարում մեր ծանր և երկարամեայ գործունէութեան համար և աւելի էլ միտքով լի ծառայած սրտով, աւելի էլ մեծ յոյսերով կը մանենք մեր գործունէութեան 20-որդ տարեշրջանը, աւելի էլ ուղեւորված եռանդով կը շարունակենք գործել և ապագայում:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՈՆ

Հայոց դերասանական խումբը դեկտեմբերի 26-ին ներկայացրեց «Սխալ հաշիւ» նոր կօմէդիան, որը տեսնելու համար հաւաքված էր բաւականաչափ հասարակութիւն: Պ. Ալեքսանդր Երեցեան, մեր ծերունի հնազգետը, այդ պիէսը հրապարակ է հանել իբրեւ փոխադրութիւն, սակայն պիէսն այնքան հայացքած, նոյն իսկ ինքնուրոյն դարձած, և բուն հայկական տիպերով է համեմատ, որ մենք տրամադրված ենք աւելի պ. Երեցեանին համեմատելով մեր գործընկեր «փոխադրութիւն» բառը: Պիէսայի, եթէ կարելի է այսպէս ասել, հիւստածքը, ճշմարիտ է, փոխ է առած, բայց այդ հիւստածքի բոլոր նկարները և զարդերը զուտ հայկական են և ծնունդ պ. Երեցեանի գրչի: Գործող անձինք պտտվում են մի գաւառական հայոց քաղաքում և խօսում են թէ գրական, թէ Ալեքսանդր Երեցեան և թէ թիւրքահայոց բարբառով: Միտքը հետեւին է: Մի Սիրեկան աղայ, պաշտօնավոր զինուորական և վերջում էլ հողաբարձու հայոց դպրոցի, ինտրիգներ է լարում և թշնամացնում միմանց հետ քաղաքի երկու բոխիկներին՝ հին-բոխի Հեթանոսներին, և երկուստեք բոխիկ Նախարարներին: Սիրեկան աղայի ինտրիգներ լարելու նպատակն է, որ քաղաքից հեռացնի բոխիկները մինի, որպէս զի նրա պաշտօնը ստանձնի իր եղբոր որդին, որը շուտով պէտք է աւարտի բոխիկական ֆախուրտները: Իր դիւական, կամ աւելի լաւ է ասել «աղայական» նպատակին հասնելու համար Սիրեկան աղան՝ կուռ է գցում բոխիկներին ընտանիքների մէջ, լուր է տարածում, որ բոխիկների կանայք հաւատարմի չեն իրանց ամուսնիներին, քաղաքի պատերին խայտառակ աֆիշաներ է կցնում

բախանանց կարգալ տուց իր ուղերձը, միւս պարտներն էլ մի ուղերձ ներկայացնելին և ոչ թէ ուրանային «Մշակի» բոլոր արժանաւորութիւնները, պնդելով թէ «Մշակը» իր գոյութեան սկզբից մինչև վերջը՝ անօրոգիս և նոյն իսկ վնասաւոր է եղել... Իսկ զի քիչ բան է, պարտներին, որ «Մշակը» ձեռք միտ նիւթ է մատակարարել և դուք նրանով միտ ապրել էք, որպէս օտարակեր (պարագիտ) բոյսեր կամ կենդանիներ... Այո, արդարութիւնը կը պահանջէր որ դուք էլ մի ուղերձ տայիք հետեւեալ բովանդակութեամբ.

«Մշակը» մեզ համար այն աղբիւրն էր, որից մենք քաղում էինք մեր բոլոր մտքերը, թէ և սպիտակին սև էինք ատում, իսկ սևին՝ սպիտակ: Եթէ «Մշակը» չը լինէր, մենք չէինք իմանայ թէ ինչ բաների վրա գրենք: «Մշակը» կը գրէ մի յօդուած,— և ահա մեզ համար առատ նիւթ, առատ կերակուր կայ: Հէնց որ «Մշակին» մի համարը պատահմամբ անգոյն է,—մենք էլ չը գիտենք ինչ բանի վրա գրենք, մենք էլ անմիջապէս անգոյն ենք դառնում: Մեր համարները երկար տարիներ ընթացքում, սկսած մեր նախահայր հանգուցեալ «Մեղու Հայտատանի» լրագրից մինչև մեր օրերը, այն ժամանակ միայն հետաքրքրել էին լինում, երբ նրանց մէջ կայ մի որ և է պատասխան «Մշակին»: Այո, մենք բոլորս «Մշակով» ենք ապրում, առանց «Մշակի» մենք մեռած ենք, մենք գրօշի գին չունենք: Ուրեմն

նրանց մասին, և նոյն իսկ լրագրի մէջ (բնադուրս բերած լրագրից հանգուցեալ «Մեղու Հայտատանի» էր) տպում է, թէ Հեթանոսներ խելագարված է և այն և այն... Այդ խաբարն աղայի եղբոր որդին էլ չէ ուզում գալ այդ քաղաքը բռնել պաշտօնով,—ամեն բան բացվում է, ինտրիգանքը զգուժ է իր «սխալ հաշիւը» և ամենքն էլ տեսնում են, որ իրանց գլխին փաղ խաղացող բարեպաշտ, սուտ ճգնաւոր (և անկասկած դպրոցի փողերը խոռոչ) աղա Սիրեկանն է....

Պ. Երեցեանի «Սխալ հաշիւը» պիէսն էլ իր չափով ոչ հասարակական հարցեր մտնելու և ոչ ինչ գիրքի դնելու. նա, առանց փխրօթապաշտութեան, բնա է դուրս բերում ծիծաղալարօտ տիպեր, և իր հերոսներին այնպիսի դրութեան մէջ է դնում, որ կարողանում է կուշտ ծիծաղեցնել հասարակութիւնը: Բայց չէ որ հասարակութիւնը կուշտ ծիծաղեցնելու համար չնորք է հարկաւոր, և լաւ չնորք....

Մենք համոզված ենք, որ եթէ պ. Երեցեան աղայի «Սխալ հաշիւը» մի քանի ծանր և ոչ բնական երկարաբանութիւններով, այն ժամանակ նա կը դառնայ մի դուրեկան թեթիւ պիէս մեր գաւառական թատրոնի համար: Աշխատատիրոջը կարողացել է շատ աշխուժեցնել հերոսներին բնականութեամբ դնել գաւառական բարբառների շատ ծիծաղալարօտ կտորներ,— և այդ նոյն իսկ շատ գովելի միտք է, քանի որ դրանով կարելի կը լինի անյայտութիւնից հանել մեր գաւառական այս կամ այն բարբառը և աւելի ծանօթ դարձնել նրան:

Գերասանները և դերասանները լաւ խաղացին «Սխալ հաշիւը»: Հասարակութիւնը, անկողմ արտիք ընթացած ծափահարութեամբ մի քանի անգամ բնա դուրս կանչեց պ. Երեցեանին: ***

ՄԱՆԿԱԿԱՆ ԶՈՒՄԱՐՆԵՐ

Նոր տարվայ և ծննդան տօներն եկել են.— ամեն մարդ ցանկանում է ուրախանալ, դուրսանալ և օգուտ քաղել տօն օրերից:

Քաղաքային հասարակութեան բուն ձգտումը, որքան կարելի է ուրախութիւններ և նոյն իսկ քիչ քիչ երբ մէջ անցկացնել իր մի քանի արձակ օրերը—հասկանալի և մինչև իսկ ընտանի է: Կարգադրող ամբողջ ամիսներով նստած լինելով դրասեղանի առաջ, ստիպված լինելով ամբողջ օրերով արտագրել պաշտօնական թղթեր, վարձակաւոր առաւօտից մինչև երեկոյ անձնատուր եղած լինելով իր դասերին, գործակաւոր առաւօտեան 7 ժամից մինչև երեկոյեան 9 ժամը կանգնած լինելով խանութի առաջ, բանտորը, մշակը՝ սոված փողով, պատառնոտած չորերով, գիշեր և ցերեկ մէջը ծածկ լինելով ծանր աշխատանքի տակ,—վերջ է վերջոյ, ամենքն էլ մի տեսակ ներքին պահանջ են զգում ուրախանալու, և երբ տօները պատճառով ամեն տեղ գործերը կանգ են առնում, իւրաքանչիւրը դրանցից իրան

ընդունեցէք մեր խորին շնորհակալութիւնը որ «Մշակին» պատասխանելով, նրան հայտնելով միայն կարողանում ենք ապրել, գոյութիւն ունենալ... Եթէ ոչ, մեր գլխները այնքան խեղճ են, այնքան աղքատ են որ և է պաշարով, որ եթէ «Մշակին» անդադար պատասխանելը չը լինէր, ճշմարիտ չը գիտենք ինչ բանի վրա պէտք է գրէինք... *

Եւ մի՞թէ բացի հանդուցեալ «Մեղու Հայտատանից», «Արձագանքից» և այլ լրագրիներէր, որոնց անսուղ, այն էլ նոր տարվայ օրը, ամառում ենք արտասանել, նոյնը չէ պատահել նորերում և մեր երեկի թատերադրող և նոյնքան երեկի, աշխարհօրէակ վիպագրող պ. Երեցեանը, որ նորերում կարողացաւ փայլել հայոց ամբողջ հասարակութեան առջև իր ամբողջ փայլով: Եթէ «Մշակը» նրա «Իշխանուհի» պիէսայի մասին քննադատութիւն չը գրէր, պ. Երեցեանը չէր առիթ չէր ունենալ պատասխանել և իր պատասխանի մէջ շարունակ միամիտներին իր ուսումնականութեամբ... Տէր իմ Աստուծոյ, ինչքան բան է կարողացել այդ մարդը... Ել Երեցեանի ասես, էլ Սէրվանտես ասես, էլ Վիկտոր Հիւգօ ասես, էլ Կանտ ասես, էլ Լամբրտօ ասես, էլ Զօլա ասես, էլ Գեթե ասես, էլ Երկրի ասես... *

Յատ լինում են և այնպիսի ստամոքսներ, որոնք ամեն բան շատ լաւ մարում են, օրինակ շատ լաւ մարում են ազգային և եկեղեցական փողերը... Ի դէպ, շուտով կ'ստորագրուին պատգամաւորների ընտրութիւնները պիտի լինեն և ահա «Մշակի» խմբագրի բաց նամակով ինքն իրան թեկնածու է առաջարկել թեմական պատգամաւորի պաշտօնին համար... Ի հարկի, ահագին աղմուկ, հայտնաբեր... Ինչ արած... Անսովոր բան է... Տնից տուն մանալ և ինդրել, աղաչել, պաղատել, որ իրան ընտրեն մի որ և է հաստատութեան կառավար

նետում է ուրախութեան գիրքը, և այդպիսով մեր քաղաքների հասարակաց հիմնարկութիւնները, սկսած թատրոնից, կուրբից, մինչև ցերեկ և գիշերուց լցվում են ամեն դասակարգի հասարակութեան ներկայացուցիչներով... Եւ ահա սկսվում է կատաղի քէֆ, մի սանձարձակ դուրսնութիւն, անհոգութիւն, մի գրաւիչ շրջան....

Ամենքն էլ ուրախանում են... Մոռացված են միայն նրանք, որոնց օրգանիզմը անհամեմատ աւելի հանգստութեան և աւելի մեծ դուրսնութեան է կարօտ: Մոռացված են մեր ման ու լինելու: Առաւօտից մինչև երեկոյ փակված լինելով աղատ օդից զուրկ սենեակներում, երկար ժամերով նստած լինելով դաստաններում, երբեք աղատ չը լինելով խոտապահանջ բօնաների և մայրերի հակողութիւնից, ծնողների դատաւանդների պատճառով, զրկված լինելով դաստաններից և հետաքրքրական դուրսնութիւններից, մեր մանուկները, հասարակութեան այդ ամենաքնքշույն և ամենասիրելի դասակարգը, բաղդ չեն ունենում նոյն իսկ տօն օրերին կերպարանափոխելու իրանց սովորական կեանքը, բաղդ չեն ունենում ընկերաբար մի լաւ դուրսնաւոր, մանկական ուրախութիւններ, դրօսանքների, քէֆեր սարքելով:

Ծնողները գնում են թատրոն, կուրբ, ցերեկ, գիշերուց, մեծերը գնում հիւր, ճանապարհորդում են, իսկ նրանց որդիքը, փոքրերը միջոց չունեն նոյն իսկ տօներին մի քանի օր միմեանց հետ դուրսնաւոր:

Մեր ինտելիգենտ համարվող ծնողները իրանց պարտը կատարած են համարում, եթէ ծնողներն կամ նոր տարվայ տօներին իրանց երեխաներին մի անգամ թատրոն, կամ տօնածառի տանն: Երեխային փախաւթած, պոլիցիական հակողութեան տակ, տանում են, ամեն քայլափոխում նրա մանկական կրքերը սանձահարում են և մի երկու ժամ փակ սենեակներին մէջ նստեցնելուց յետոյ, կրկին յետ են բերում, և միտքով և իրանց, թէ երեխաներին դուրսնաւոր, տօնածառ, կամ թատրոն տարան... Եւ հէնց այն ժամերին, երբ ծնողները կատաղի քէֆեր են նուրբված, նոյն րօպէներին, երեխաները փոռում են սենեակների նիւթած օդի մէջ, և այն էլ յանուն մեր ս սիւրբ մանկավարժութեան, որ «Երեկոյան վատ օրինակ չը վերցնի», որ «Երեկոյան չը մրսի»:

Գարուններ իրանց աշակերտների համար չեն կազմակերպում դրօսանքներ, դատարարներին իրանց սաներին, նոյն իսկ տօներին ոչ մի տեղ չեն տանում, ոչ մի աղատ, բացօդայ ուրախութեան մասնակից չեն անում, ծնողներն էլ իսկի մտքներով չեն անցկացնում, թէ մանուկներին էլ հարկաւոր է ուրախութիւն, դուրսնութիւն,— և այդպիսով թէ դպրոցի և թէ ծնողների կողմից մոռացված այդ փոքրիկների, մանուկների ամբողջ հասարակութիւնը, թէ տօներին, և թէ ոչ տօներին, զուրկ է մնում նոր, աղատ, մարմինը կադրող և սիրտը բաց անող դուրսնութիւնից:

Ուրեմն էլ ինչու ենք դարմանում, որ փակված

Այդքան բան կարգալ կը լինի, պ. Երեցեանը գէ... Եւ այդ բոլորը (չը մոռանաք) ոչ թէ դուրսնութեան համար, այլ իր արհեստի համար: Ինչ դժուար արհեստ էք ունեցել, պ. Երեցեանը գէ... Բայց դարմանալին այն է որ այդքան բաներ է կարգացել մարդը, իսկ պիէսա գրելիս, էլի այնպիսի բան է գրել, որը ցոյց է տալիս թէ իր կեանքում իսկի ոչինչ չէ կարողացել... Զարմանալի և անբացատրելի երեւոյթ...

Երեկ խեղճ մարդու մարտողութեան կարողութիւնը շատ վատ է... Լինում են ասիւր, այնպիսի ստամոքսներ, որոնք ինչքան էլ ուտեն,— ոչինչ չեն մարում... *

Յատ լինում են և այնպիսի ստամոքսներ, որոնք ամեն բան շատ լաւ մարում են, օրինակ շատ լաւ մարում են ազգային և եկեղեցական փողերը... Ի դէպ, շուտով կ'ստորագրուին պատգամաւորների ընտրութիւնները պիտի լինեն և ահա «Մշակի» խմբագրի բաց նամակով ինքն իրան թեկնածու է առաջարկել թեմական պատգամաւորի պաշտօնին համար... Ի հարկի, ահագին աղմուկ, հայտնաբեր... Ինչ արած... Անսովոր բան է... Տնից տուն մանալ և ինդրել, աղաչել, պաղատել, որ իրան ընտրեն մի որ և է հաստատութեան կառավար

սենեակներում և պոլիցիական հակողութեան տակ մեծացած, աղատ օդից և աղատ շարժողութիւնից զուրկ մեր մանուկները դառնում են մարմնով վատաւոր և հոգով էլ թուլամորթ արարածներ....

Մ.

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

Գեկտեմբերի 20-ին

Ինչպէս հաղորդել էի, այստեղի երկու այգիներէ մէջ դանդաղ հրապարակից, մօտ 160 քառակուսի սափէն տեղ, պահանջել էր տեղիս պ. Նահանգապետը՝ ռուսաց եկեղեցի շինելու համար: Գուման իր առաջին նիստում որոշեց պ. քաղաքապետի միջոցով առաջարկել՝ վերցնել մի ուրիշ կտոր, անդիլական այգուց, կամ փոխարինաբար՝ Սարգարի այգին, որը պետական կալուածք է, զիջանել քաղաքին: Պ. Նահանգապետը ոչ մէկի հետ չէր համաձայնվել, պատասխանելով, որ ռուսաց եկեղեցին պիտի լինի ամենաաչքի ընկնող տեղում, լայն հրապարակի վրա և ուրեմն այդ պահանջած տեղում, իսկ Սարգարի այգին զիջանել յօդուած քաղաքի չէ կարող. որովհետեւ այն այգում ինքը մտադիր է զինեղործական և այգեգործական դպրոց շինել տալու: Իսկ երբ պ. քաղաքապետը յիշեցրել էր, որ քաղաքն աղքատ է և որ այդ տեղին մօտ 30.000 ռուբլի տուողներ են եղել և խնդրել էր չը զրկել քաղաքը այդ գումարից, պ. Նահանգապետը դրա փոխարէն խոստացել էր ուրիշ հանգամանքներում օգնութիւն հասցնել քաղաքին: Այս հիման վրա էլ մի քանի օր առաջ տեղիս քաղաքային գումանորոշեց ինչպիսի գետնից յատկացնել ռուսաց եկեղեցու շինութեան համար:

Մօտ երեք շաբաթ այստեղ սաստիկ փոփոխակի եղանակներ սկսեց անել՝ երբեմն տաք, երբեմն ցուրտ, երբեմն էլ չոր: Հիւանդութիւնները սկսեցին շատանալ, մանաւանդ զիգոտերի, որը ահագին զոհեր տարաւ երեխաներից: Այժմ ցըրտերն ընկել են, այնպէս որ գիշերները 6—8 աստիճան ցուրտ է անում և դրա շնորհիւ էլ վերջացան հիւանդութիւնները: Մի քանի դէպքեր էլ եղան ինֆլուէնցա հիւանդութիւններ:

Այս օրերս բացվեց այստեղ սիֆիլիսով հիւանդների համար առանձին հիւանդանոց, որի վերահսկողն է Նահանգական բժշկի օգնական պ. Կրեպին: Դուռով էլ բացվելու է ընդհանուր հիւանդանոց 10 մահապալներով, որին կը միանայ այդ սիֆիլիսական բաժինը:

Բարեկարծական ընկերութեան՝ տեղիս հիւղը այժմ ունի 84 անդամներ: Ցաւալիս այն է, որ այդքան անդամները—այն էլ վարչութեան անդամներ ընտրելու համար՝ ամսիս 15-ին հրաւիրված ընդհանուր ժողովին ներկայ էին միմիայն 5 հօգի: Երկրորդ ժողովը հրաւիրված է ամսիս 22-ին: Դուռով հին անդամները փոխվելու են, բայց ահա 7 ամիս է, որ վերաստուգող յանձնաժողովը՝ դեռ չէ ստուգել այդ անդամներին հաշիւը:

Ս. Տ. Մ.

Ինչ, կամ դերեկտոր, 5000 ռուբլի ուժիկով,—այդ կարելի է.... Իսկ առաջարկել, որ իրան ընտրեն մի պաշտօնի համար, որտեղ փողի նշոյն էլ չը կայ, ընդհանուր գործին և կուսակցական որոշ սկզբունքներին անկեղծ կերպով ծառայելու համար,— դա ամօթ բան է....

Կատաղութիւնը մեծ է: Չը գիտեն ինչ անեն.... Աշխատում են ամեն տեսակ բամբասանքներով՝ վնասել այդ տեսակ յանդուգն մարդուն, վերջը կարծում են թէ ժողովրդի թոյլ դամարն են գըտել և յիշեցնում են ժողովրդին թէ «Մշակի» խմբագիրը եկեղեցուն անհաւատարմ է, որ նա իսկապէս, ինչպէս ասեմ.... բուն կամ զուտ լուսաւոր չա կան չէ....

Գրա հետ են չեմ կարող չը համաձայնվել.... Այդ կատարելապէս ուղիղ է....

Մի ժամանակ, շատ տարիներ առաջ, «Մշակի» գոյութեան առաջին տարիներում, Ղազարոս Աղայեանց բանակաւորով «Մշակի» հետ, պնդում էր, որ Գրիգոր Արծրունին բուն հայ չէ, որովհետեւ Մօսկվայում է ծնվել ու իր երեխայութիւնից օտար, փլաւ, խաւ, ջօնջօն ուղտն է ի կրել....

Նոյն ամսման միտքը կրկնում են և հիմիկայ խելօքներ.... Գրիգոր Արծրունին զուտ լուսաւորչական չէ. այո, ուղիղ, շատ ուղիղ էք ասում, որովհետեւ Գրիգոր Արծրունին, ինչպէս ջօնջօն ուղտն է ի կրել, երբեք չէ բերել, այնպէս էլ երբեք եկե-

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

«Մշակի» ներկայ համարը բաղկացած է 6 երեսից:

«Մշակի» երկրորդ համարը կը հրատարակվի յունվարի 4-ին, երրորդ համարը՝ յունվարի 9-ին, իսկ չորրորդ համարից սկսած, որը լոյս կը տեսնի յունվարի 11-ին, կը շարունակվի մեր լրագրի կանոնաւոր հրատարակութիւնը:

Լսում ենք, որ կաթողիկոսական պատգամաւորները ընտրութիւնները թիֆլիսի մէջ նշանակված են, եկեղեցիներում, որոնք կուր գետի աջ կողմին են գտնուում՝ յունվարի 26-ին, եկեղեցիներում, որոնք կուր գետի ձախ կողմին են գտնուում՝ փետրվարի 2-ին, իսկ թեմական պատգամաւորի ընտրութիւնը նշանակված է մարտի 8-ին: Սակայն մեզ զարմացնում է, որ առաջնորդը և կոնսիստորիան պաշտօնապէս չեն յայտնում ընտրութիւնների օրվայ մասին: Պէտք է մամուլի միջոցով նախօրոք պաշտօնապէս յայտնել և ոչ թէ ընտրութիւնների նախընթաց օրը միայն մասնաւոր նամակներով հրաւիրել ծխականներին: Շատ անգամ այդ տեսակ հրաւիրատուներ ուղարկող քահանաները զեղծումներ են գործում և ծխականներին միայն այն անձանց են հրաւիրում, որոնք ձայնատուութիւնը նպատակաւոր է իրանց մտադրված նպատակներին: Այդ պատճառով եթէ կոնսիստորիան և առաջնորդարանը կը յամառեն պաշտօնապէս չը հրատարակել ընտրութիւնների օրվայ մասին, մենք մեր կողմից խորհուրդ կը տանք ծխականներին առաջնորդ պահանջել, որ ընտրութիւնն օրվայ մասին նախօրոք յայտարարվի թէ եկեղեցիներում և թէ տաղաքական խօսքի միջոցով և այն օրը, առանց սպասելու քահանայի կողմից հրաւիրվելի՝ բոլոր ծխականները իրանք չապակեն եկեղեցի, ընտրութիւնը մասնակցելու համար:

«Մշակ» լրագրի 148-րդ համարում «Մի տարօրինակ երևոյթ» վերնագրով յղուածում հաղորդել էինք մեր ընթերցողներին տիկին Annie Abbote-ի մագնիսական ոյժ ունենալու մասին: Այժմ ճիշդ յայտնի է, որ տիկին Annie Abbote ճարտիկ խաբեբայ է եղել և ինչպէս կարդում ենք «Врачъ» լրագրի № 51-ում, «կին մագնիսիկ» խաբեբայութիւնը երևան են հանել Ամերիկայում, որտեղից և նա փախել է Եւրոպա:

«Новости» լրագրի մէջ կարդում ենք. «Պետերբուրգի տիկնիսկան ընկերութեան մէջ, VIII-րդ բաժնում, նորերս հայ ինժեներ իլյան Ա. Պ. Բէհրուզով զեկուցում արեց իր հնարած սխտմի շարժական լծակի (коромысло) միջոցով շողին կարգադրելու մասին: Այդ նոր գիւտի շնորհով, այժմեան էկսքէնտրիկները մեքենաներում, որոնք շողին կարգադրելու են ծառայում, անպէտք են դառնում: Այդ սխտմի միաժամանակ պէտքա-

ղեցական, լուսաւորչական փողեր անուշ չէ արել... Ինչպէս երևում է բուն լուսաւորչականը նա է, ով իր կենսութեամբ մի քանի անգամ լուսաւորչական աղգային փողերն է անուշ արել, կերել ու մարսել է, և այժմ այդ փողերն իր փորումն ունի...:

Ինչպէս երևում է լուսաւորչական եկեղեցու ու նրա գործերի դադրել կարող են միայն այն մարդիկ լմանալ, որոնք այդ եկեղեցու փողերից անուշ են արել...:

Դրանց էլ կասենք՝ Աստուած բարի վայելում տայ...:

Թէ և եկել հասել է նոր տարին, բայց այս անգամ դեռ ոչ ոքին չեմ կարող ընծաներ բաժանել... փող չունեմ... Խմբագիրն ասում է թէ այս տարի լրագրի բաժանորդագրութիւնը շատ լաւ է գնում, այնպէս լաւ, ինչպէս «Մշակի» դո-յութեան ամբողջ ընթացքում ոչ մի տարի չէ եղել... Եւ այդ պատճառով խառնացել է ինձ, ֆելիտոնիստիս, ուժինի աւելացնել... Երբ փողեր կը ստանամ, խոստանում եմ ամենին ընծաներ անել...:

Քիչ համբերեցէ՛ք, պարոններ. ամեն բան երեւի կ'ըրոյշվի, կը պարզվի փետրվար կամ մարտ ամսին...:

Իսկ առ այժմ կը պատմեմ ձեզ, ընթերցող, թէ ինչ ընծայ է արել նոր տարութեան համար

կան է թէ չօգնար մեքենաների և թէ չօգնաւորներ համար և այն յատկութիւնն ունի, որ նրա մասերը գտնվում են մեքենայի դրսի կողմի վրա, և այդ պատճառով հեշտ է մանրակրկիտ քննութեան ենթարկել և պատահումները առաջըն առնել: Տեխնիկական ընկերութեան VIII-րդ բաժնումեւնքը ցանկութիւն յայտնեց, թէ զեկուցանողի գիւտն արժանի է, որ ժամանակակից տեխնիկայի մէջ կատարեալ աջողութիւն ունենայ:

Ռուսաստանի հետ թիւրքիայի առևտրական յարաբերութիւնները ընդարձակելու նպատակով մայրաքաղաքի լրագրիներին խօսքերով, Կ. Պոլսում կազմվում է ապրանքների մի ցուցահանդէս-մազազին, որին մասնակցելու համար Օղէսայի առևտրական մասնաժողովը այս օրերս հրաւիրել է Ռուսաստանի հարաւարդիւնաբերողներին, որոնք առևտրական յարաբերութիւնն ունեն թիւրքիայի հետ: Ցուցահանդէսը ընդարձակ չափերով է կազմակերպվում և բաղկացած կը լինի տասն և երկու բաժիններից:

Այս օրերս մեր խմբագրատուն եկաւ մի թիֆլիսցի կին, սովորական գանգատով.—նա օգնութիւն և հաց է խնդրում չորս օրերի համար, որոնք ոչ հայր ունենալով և ոչ մայր, իր շինքի վրա են ընկել: Հարկատու է հոգալ այդ օրերի մասին, նրանց պէտք է տեղաւորել այս կամ այն տանը, կամ մի որ և է արհեստի և ուսման պէտք է տալ: Թող բարեգործ մարդիկ չը զւսնան այս տոններին, մի քանի բուրբի նուիրելու յօգուտ փորձահասակ օրերի: Անօքնական օրերի օգնելը.—սրբազան պարտք է ամեն մի քրիստոնեայի, ամեն մի մարդու համար:

Թիֆլիսի հայոց «Հրատարակչական ընկերութիւն» մտադիր է հայերէն լեզուով հրատարակել ուսաց կառավարութիւնից հաստատված «Պօլօթիկ» ասված հայ եկեղեցական կանոնադրութիւն: Միջոց տալ ժողովրդին ծանօթանալու այն օրէնքների հետ, որոնցով կառավարվում է թէ ինքը և թէ իր հիմնարկութիւնները.—գովելի գործ է, և շատ ցանկալի է, որ ժողովրդի համար, մատչելի դնով հրատարակվին՝ Պօլօթիկից յետոյ՝ ուրիշ օրէնսդրութիւններ, ինչպէս օրինակ գիւնուորացական կանոնադրութիւնը և դատաւտանական մի քանի, ժողովրդին աւելի հարկաւոր օրէնքներ:

Թիֆլիսի թեմի դպրոցների ուսուցիչների կողմից անդադար դժգոհութեան գանգատներ են հասնում մեզ թեմական տեսուչ Գեղամեան քահանայի դէմ:

Երեկայ յունվար ամսին Թիֆլիսի թեմում վիճակային պատգամաւորների ընտրութիւններ պիտի լինեն: Ինչպէս երևում է մեզ հասած տեղեկութիւններից, ուրիշ թեմերում էլ այս ամսին

մի գաւառական բժիշկ իր քաղաքի հայոց թեմական դպրոցին... Երբեք չէք կարողանայ դուշակել...:

Այդ հնարաղետ բժիշկը ընծայել է թեմական դպրոցին, ինչ էք կարծում,—մի դիակառք...:

Նա այսպէս է մտածել. ինչի մասնաւոր ձեռնարկողներ պէտք է մեռելներին չափելն. աւելի լաւ էք լինի եթէ այդ օգուտն ունենայ հայոց թեմական դպրոցը, որն այնպէս էլ բաւական աղքատ է... Հէնց որ մի մարդ է մեռնում քաղաքում (մասնաւոր եւ որ այժմ ինֆլուէնցիան շատ է տարածված) թեմական դպրոցը անմիջապէս քրէհօվ է տալիս իր դիակառքը և չափում է... Ահա դպրոցի համար եկամուտի մի մշտական աղբիւր... Հանձնարել միտք:

Բայց երևում է թէ դիակառք ընծայող բժիշկը ինքն շատ հաբուստ է եղել ու բժշկական պրակտիկայի մէջ կարիք չէ ունեցել, եթէ ոչ այդ տեսակ գեղեցիկ ընծայ չէր անի թեմական դպրոցին, այլ ինքն իր համար կը պահէր ու ինքն էլ դրանից կը շահվէր, պ.պ. ննջեցեալներին քրէհօվ տալով...:

Եթէ թիֆլիսի բժիշկները միջոց ունենային մի դիակառք ձեռք բերել, կարծեմ շատ ուրախ կը լինէին... Երանք այժմ այնքան շատ են և նրանցինք շատերը, չը նայելով որ ինֆլուէնցիան մեզ մօտ էլ է տարածված, իսկի պրակտիկա-

պէտք է տեղի ունենան վիճակային պատգամաւորների ընտրութիւնները:

Թիֆլիսի Եւրոսիսեան դպրոցի ուսուցչական ժողովը ընտրել է մի մասնաժողով, որի պարտաւորութիւնն է կարգի բերել գրադարանը, կանոնաւորել հին գրքերը և առնելով նոր գրքեր: Հոգաբարձութիւնը վճռել է տարեկան մի օրոշ դուսար տալ՝ գրադարանը հարստացնելու համար:

«Русская Мысль» ամսագրի խմբագրութիւնը Մոսկվայում լոյս ընծայեց մի գրական ժողովածու, որը վաճառվում է յօդուտ սովետներին: Ժողովածուի մէջ մասնակցողները ամսագրի աշխատակիցներն են:

Այս օրերս Գանձակի մօտ, Անդրկովկասեան երկաթուղու գծի վրա գտնվող մի բուսական յարմարակցեցան աւաղակներ: Այդ միջոցում բուսական ծառայողը այդտեղ չէր գտնուում, իսկ նրա կինը փակվեց բուսակայի մէջ: Աւաղակները պահանջեցին որ դուռը բացվի, բայց կինն ընդդիմացաւ: Տեսնելով որ դուռը չէ բացվում, աւաղակները մէկը բարձրացաւ և սկսեց կոտրել բուսակայի լուսամուտը, որպէս զի այնտեղով ներս մտնի: Այդ միջոցում կինը արձակեց հրացանը և գնդակը աւաղակի բերանը մտնելով՝ տեղը ու տեղը սպանեց նրան: Միւս աւաղակները սարսափահար եղան, անմիջապէս անհետացան, թողնելով իրանց մեռած ընկերոջ գետնին ընկած: Կնոջ աղաղակի վրա հաւաքեցեան մարդիկ և տեսնել, որ սպանված աւաղակը ոտից մինչև դուռն զինաւորված մի թուրք էր:

Իբրեւի խորմատ, բայց մեր հասարակութեան մեծամասնութեան անհաւանալի «Ուրուականներ» պիտան, թարգմանութիւն պ. Թարխանեանի, հայ դերասանական խումբը ներկայացրեց ղեկավարների 30-ին, յօդուտ երկար տարիներ հայոց բեմին տոկունութեամբ ծառայած դերասանուհի Զաքէլի և ապագայ խոստացող երիտաւար դերասան Աբէլիանի: Ներկայացումը գրաւեւ էր բաւականաչափ հասարակութիւն: Բեմե-ֆիլեցիանները վարձատրվեցան բաւականաչափ ընծաներով և ծափահարութիւններով: Հինգշաբթի օր խաղացվելու է «Աւաղակներ» պիեսան:

Թէհրանից հետեւալ նորութիւնն են հաղորդում. պարսից Շահը այս օրերս գրաքննիչ է նշանակել, որը պէտք է քննի Թէհրանում լոյս տեսնող հայերէն ու ուսուցիչ գրքերը, վիստաի պաշտօնը ստանձնել է մի սպարանաւոր հայ:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՑ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Վերջին տարիների պատմութեան մէջ՝ ոչ մի տարի այնքան աղքատ չէ եղել քաղաքական

չունեն, խեղճներ... Կարող էք երեւակայել որքան մեծ բաղդ կը լինէր պրակտիկայից դուրս մի այդ տեսակ բժիշկի համար մի գեղեցիկ, փառաւոր ստեղծ ձեռք բերել... Եւ նա դրանից յետոյ անմիջապէս և պրակտիկա էլ ձեռք կը բերէր... Բաւական կը լինէր միայն այդ տեսակ յայտարարութիւն տալի տեղական լրագրիներում:

Բժշկապետ Ա. Ֆ.—հանց պատրաստ ունի ննջեցեալների համար մի փառաւոր և շատ յարմար ԳԻՍԿԱՌՔ: Ցալիս է քրէհօվ, էտպի գետի, տակապիւն համեմատ, պ.պ. ննջեցեալներին և տ.տ. ննջեցեալներին, առհասարակ իսկ և փական հիւանդներին համար՝ 50% զիջում կը լինի: Ընտանիքով (մեծ քանակութեամբ) մեռնողների համար՝ 80% զիջում: 1—100

Կարող էք երեւակայել որքան կաւելանայ պրակտիկան այդ տեսակ բժիշկի մօտ...:

Գրանից յարմար բան... Եւ զարմանում եմ որ պրակտիկայից դուրս մեր բժիշկները այդ բանի վրա մինչև այժմ չեն մտածել... սակայն լաւ մտքերը միշտ ունեն գալիս...:

Համ բժիշկ լինել, համ սեփական ղեղապետն ունենալ, համ սեփական դիակառք պահել, համ դադարների մաղաղին ու վերջապէս սեփական

դէպքերով, որքան անցած 1891 թիւը: Ոչ մի քաղաքական յեղափոխութիւն, ոչ մի պետական կրկարանափոխութիւն, ոչ մի գահընկէցութիւն, ոչ մի նոր թագաւորութիւն, ոչ մի դիպլոմատիական մեծ ընդհարում, և վերջապէս ոչ մի նշանաւոր վարչական-միջնորդական անկում կամ պաշար: Եղածներն էլ այնքան երկրորդական և աննշան էին, որ ոչ մի հետք չը թողեցին: Ահա այդ անշարժութիւնն է եւրոպական քաղաքական կեանքի անցեալ տարվայ բնաւորիչ յատկանիշը:

Եւրոպական գահակալները և քաղաքական դուրծիները, նոր տարվայ առիթով, ըստ սովորականին, ձառեր արտասանելով, ոչինչ նոր բան չասեցին շախարհին. նրանք կրկնեցին իրանց հին երգը, նրանք կրկնեցին իրանց հին ձառերը, համարեա մի և նոյն խօսքերով: Այսպէս. «Եւրոպական խաղաղութիւնը ապահով դրութեան մէջ է: Այն յարաբերութիւնները շատ լաւ են դէպի հարեան պետութիւնները: Խաղաղութիւնն այս տարի էլ ապահովված կը լինի»:

Եւ խաղաղութիւնը ապահովող ամենամեծ ոյժը այն միջոցաւոր հրացանները և թնդանօթներն են, որոնք դրած են միջնորդական դիտողներին ուսերի վրա և ամրացրած են բերդերի աշտարակների վրա: Այդ այն խաղաղութիւնն է, որ շատ սրամիտ կերպով անուանեցին «զինուորական խաղաղութիւն»:

Զինուորական խաղաղութիւնը,—կարելի է հաւատալ,—անկասկած երկարատեւ կը լինի: Եւրոպական պետութիւնների այդ յոյսը հիմնված է լատինական այն խորմատ խօսքերի վրա, թէ «եթէ ուղում ես խաղաղ լինել, պատրաստ եղիր պատերազմի համար»: Եւրոպական պատերազմի երկուդն այնքան մեծ է, և հետևանքներն այնքան երկաւղալի, որ ոչ մի պետութիւն իրան թոյլ չէ տալու, առաջինը պատերազմի փողերը հնչեցնել, եթէ մինչև անգամ հարկաւոր լինի, դիցուք, սըրբել մի որ և է դիպլոմատիական վիրաւորանք կամ պաշտպան հանդիսանալ գերութեան մէջ ճնշվող մի փոքրիկ աղբին:

Առանց դիպլոմատ լինելու կարելի է հաւատալ այն խօսքերին, թէ «Եւրոպայի խաղաղութիւնը ապահովված է քաղաքական կողմից»: Բայց կայ մի ուրիշ պատճառ, որ քանի զնում աւելի ծանր կերպարանք է ստանում, և սպառնում է ահագին փոթորիկ յարուցանել ամբողջ Եւրոպայում: Դա՛ բանւորական-սօցիալական խնդիրն է: Այդ խնդիրը քանի գնում լայնանում, մեծ ծաւալներ է ստանում. նա գրաւում է թէ վարչական և թէ դիպլոմատիական գործիչների ուշքն ու միտքը, և ինչպէս երևում է, մօտիկ ապագայում եւրոպական կեանքի օրվայ, առաջին խնդիրը կը դառնայ:

Կանցնեն տարիներ. դիպլոմատիական հարցերը երկրորդական տեղ կը բռնեն. պետութիւնների յարաբերութիւնների հարցը կը կորցնի իր գերակշռող նշանակութիւնը, և ամբողջ քաղաքակրթութիւնը շախարհի խաղաղութիւնը կախված կը լինի նրա-

գերեզման-փորոգիներ ունենալ...

*

Սակայն քանի որ դեռ չենք մեռել, դեռ ապրում ենք ու բժիշկների ճանկերը չենք ընկել,— եկէ՛ք ուրախ ու դուսարթ հողով, ապագայի մասին պայծառ յոյսերով լի՝ հանդիպե՛ք նոր տարին:

Մաղթում եմ, սիրելի ընթերցող, կամ սիրելի ընթերցողուհի, ոչ թէ միայն անձնական բաղդ ձեզ ու ձեր ընտանիքի համար, բայց և մաղթում եմ՝ բարի ձգտումներ, լոյս, առաջադիմութիւն և այն ազգի համար, որին մենք բոլորս պատկանում ենք...:

Այս, ձեռք ձեռքի տուած միշտ ընթանանք դէպի առաջ, դէպի լուսաւորութիւն, դէպի առաջադիմութիւն, դէպի քաղաքակրթութիւն, դէպի աղնիւ, օգտաւէտ ձգտումներ և այդ ուղղութեամբ էլ կրթնեք մեր ապագայ սերունդը...:

Քանի որ շունչներս բերաններում են և մենք դեռ եւ կարիք չունենք ոչ բժիշկներին, ոչ էլ ար-մատական կերպով բժշկվելու մեղ խորհուրդ տուողներին մէջ,—միշտ ուրախ և զւարթ կերպով նայե՛ք մեր ապագայի վրա և առանց աջ ու ձախ նայելու, խղճմատաւոր կերպով կատարե՛ք մեր մարդկային և քաղաքացիական պարտաւորութիւնները...:

Շնորհաւոր նոր տարի:

ԱՄԱՍԻ

նից, թէ ինչ ընթացք են ստանում սօցիալական խնդիրները և շարժումները:

Ահա այդ են դուշակում եւրօպական ամենա-առաջնակարգ մտածողները և գրողները:

ՆՈՐ ՕՐԵՆԻ ԼՐՏԵՍՈՒԹԵԱՆ ԴԵՄ ՖԻՍԿԱԼՆԱԳՈՒՄ

Ֆրանսիական պատգամաւորների ժողովում ներկայումս քննութեան առարկայ է մի նոր օրինա-գիծ՝ լրտեսութեան վերաբերմամբ: Այդ նոր օ-րէնքը դանադանում է Բուլանժէի միջնորդութեան ժամանակ քուէարկված լրտեսութեան վե-րաբերեալ օրէնքից նրանով, որ դրա վճիռները անհամեմատ խիստ են առաջինից: Նոր օրէնքով մասնական պատժի են ենթարկվում մինչև անգամ խաղաղութեան ժամանակ լրտեսութեան համար մեղադրվածները: Այդ պատժին ենթարկվում են պետական ծառայութեան մէջ զանազան պաշտոնները, որոնք յարաբերութիւններ կը կապեն լրտեսութեան նպատակներ ունեցող անձանց հետ: Նոյնպէս մասնական պատժի են ենթարկվում այն անձինք, որոնք որ և է կերպ կը կարողա-նան մտնել բերդը, նաւահանգիստը, նաւը և այլն, լրտեսութեան նպատակով:

Լրագիրները, քննադատելով այդ նոր օրէնքը, ասում են, որ, ի հարկէ, միայն հնգամեայ բանտարկութիւնը մի այնպիսի հիշաւոր յան-ցանքի համար, որպէս հայրենիքի դաւաճանելն է, շատ քիչ է, և որ լրտեսութեան համար մեղա-դրված ֆրանսիացիներն արժանի են մասնական պատժին: Սակայն Պարիզի մամուլի մի մասը կարծում է, որ այդ օրէնքը աննպատակալարմար կը լինի գործադրել օտարապետականների վերա-բերմամբ: Սկզբունքով ի հարկէ, պէտք է հա-մաճարվել Մոնտիքի կարծիքի հետ, որն աս-տում է թէ լրտեսութիւնը ոչ մի կերպ արդա-րացնել չէ կարելի, բայց բանն այն է, որ եթէ լրտեսութիւնը յանցանք է ֆրանսիացու համար ֆրանսիայում, այդ նոյնը, այսինքն լրտեսութիւ-նը, շատ անգամ նրա պարտքն է արտասահմա-նում: Առանց լրտեսութեան գործը չէ կարգա-դրվում: Գերմանացիները և անգլիացիները լրտե-սում են Ֆրանսիայում, և այդ պատճառով ֆրան-սիացիք ևս ստիպված են լինում նոյն ղէնքով պատասխանել: Կարծիք չը կայ, որ եթէ օրէնքն իր այժմեան խմբագրութեամբ ընդունվի, օտար պետութիւնները կը բողոքեն դրա դէմ:

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ԳԱԼՔԱՎԱՆՆԵՐԻ ԹԻԻԸ

Յայտնի է այն տխուր փաստը, որ թիւրքաց Հայաստանի հայերը, այդ երկրի տնտեսական անտանելի վիճակին չը դիմանալով՝ դադարում են դէպի Ամերիկա, իրանց համար ապրուստ գտնե-լու:

Այժմ ամերիկական հայ գաղթականութեան ինտելիգենտ մասը, օգտվելով աղտոտ երկրի տուած դուրսութիւններից, ջանք է գործ դնում նպատակներ գաղթական հայերի մտաւոր և բա-րոյական շարժման, կազմելով ընկերութիւններ և հրատարակելով լրագիրներ:

Ազատ Ամերիկայի կեանքի մի քանի դիւրու-թիւնները առիթ են տալիս շատ հայերի գրաւվե-լու հեռու երկրի բարեկեցութիւն, և այդ պատճա-ռով, ինչպէս երևում է, գաղթական հոսանքը, գնալով չէ քչանում, այլ գոյն է սաստկանում է: Ճարտարադրութեամբ մինք մեր ձեռքը տակ չունենք ճիշդ թւեր այդ հարցը աւելի որոշ կացութեանը համար: Այդ պատճառով կը բաւականանանք հե-տեկալ տեղեկութիւններով, որ քաղութիւնը ար-տասահմանեան լրագիրներից: Վերջ տեղեկութիւն-ներ, ընդհանրապէս ասելով, որոնք մեծ թիւերի կը հասցունեն գաղթականութեան շարժումը. օրի-նակ, կըսուի թէ միայն կառավարութեան ստա-ցուած անցագրերի կործանները 2000-ի հասած են. բայց յայտնի է որ գաղթականների աննշան մի փոքր մասը միայն անցագրով ճամբայ ելած են. նոյնպէս կըսուի թէ խաղաղութիւնը դաշտի դիւ-ղերէն ամեն մի տուն 2—3 պանդոխտ ունի: Սակայն Մարսէլէ անցնողները հաշուելով և միւս կողմէ Ամերիկայի հայաբնակ կեդրոններն նկատի առնելով, այդքան մի մեծ թիւ չը գտնուի:

Գլխաւորապէս Մասաչուսէթս նահանգի գործարա-նական զիւղերին և քաղաքներին մէջ սփռուած են պանդոխտները երկաթուղու գծերի երկայ-նութեամբ, Ուստը լինելով կենդրոնը: Այս քա-ղաքը և շրջակայքին մէջ 2000 կը լինին մօտա-ւորապէս, Նիւ-Եորք քաղաքի մէջ ալ 400 թերևս:

արեւմտեան նահանգներն, Գալիֆօրնիա ուր աւելի վերջերս սկսած են երթալ և երկրագործութիւնով պարապել, հաւանօրէն 4—500: Ընդամեն, դա-նական նահանգների մէջ ալ սփռուածներն են-թաղարապէս հաշուելով, 4000 թուէն չեն կրնար անցնել հայ պանդոխտներն ի Միացեալ Նա-հանգս: Այս թուին մէջ խաղաղութիւնը 1000-աւոր թուանշաններ ունի. Տիգրանակերտ, Բայու, Քղի, Մալաթիա, Չըքուշ 100-աւորներ. իսկ Հայաստա-նի և Թիւրքիայի ուրիշ դաւաճաններն 10-նականներ միայն ունին: Մշակուիներ ու վանքային 10 թուէն ալ չեն անցնել:

Ցանկալի է շատ, որ Ամերիկայում հրատարակ-վող հայոց լրագիրները ճիշդ վիճակագրված տե-ղեկութիւններ հաւաքելով Ամերիկայի գաղթական հայերի մասին՝ հրատարակէին:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— Պարիզից հեռագրում են, որ պապի ներկա-յացուցիչը Հռոմի քահանայապետի հրամանով ար-գելեց ֆրանսիական եպիսկոպոսներին քաղաքա-կանութեամբ դադարել:

— Հաւատացնում են, որ եղիպտական հարցը կը կարգադրվի չուտով:

— «Daily News» լրագրին Բելիւնից հաղոր-դում են հետեւեալ. «Արժանահատ աղբիւրից ստացված տեղեկութիւնների համեմատ, բոլորա-կան կառավարութիւնը վճուր է Բալգարիայի և Բուլճարիայի անկախութիւնը հրատարակել, եթէ Բ. Գուռը զիջումն կանի Ֆրանսիային և ճնշումն կը գործի իշխանութեան վրա Շաղուրնի գործի պատճառով»:

— Եւրօպական լրագիրները անցեալ տարվայ իրանց սովորական քաղաքական տեսութիւններն անկելով դարձնում են իրանց ուշադրութիւնը քաղաքական երեք մօմենտների վրա՝ երեքպե-տեան դաշնակցութեան վերականգնման, կրօնադա-տեան անցքերի և միջազգային առևտրական դաշ-նագրերի կապելու վրա:

— Պարիզի Մալաթիայի նահանգի Կէլլար-Գաշտ դաւաճում ապստամբութիւն սկսվեց, որը սպառնում է ընդարձակ չափեր ընդունել: «Daily News» լրագրի թափուրի թղթակցին ասում է, որ այդ ապստամբութիւնը սկսել է Մալաթիայի անտունով մէկը, որը Մահմէդի սերունդն է: Այդ մարդը այն համոզմանն է եկել, թէ մասնատական կրօնն ըն-կել է և թէ ինքն ընտրված է Ամինաբադընի լից-մաքըն նրան: Պատմում են, որ Մալաթի, իր աս-տուածային կոչումն ապացուցանելու համար յա-ճախ հրամայում է մեծ խորոյ վառել: Ապա նա մտնում է կրակի միջ և անջնաւ է մնում ու չէ այրվում: Սակայն Մալաթի գետում է սչ միայն հո-ղեւոր, այլ և քաղաքական իշխանութեան: Մահմէդի նման նա գնում է սուրը ձեռքին տարածելու իր վարդապետութիւնը: Նա հրամայեց արդէն սպա-նել 40 մարդկանց, որոնք չէին կամենում ճանա-չել նրա հեղինակութիւնը: Արդէն չնայի նա-հանգապետը չէ կարողանում հնազանդեցնել Մա-լաթիին և Թէհրանի դիմաց, խնդրելով զորքեր ուղար-կել: Այդ պատճառով Շահը ուղարկեց 300 հե-տակա, 200 հեծելազոր զորք և երկու թնդանօթ:

— Պուրսիայում, ինչպէս հեռագրում են Բելիւ-նից, կազմված են մասնաժողովներ, որոնց նպա-տակն է օգնել Ռուսաստանի սովետ գերմանացի գաղթականներին:

— Կ. Պոլսից գրում են, որ վերջին ժամանակ-ներս Ունեհան անունով վաճառականը Բ. Գուռն է կանչվում՝ նրանց դանադան տեղեկութիւններ պահանջելու համար:

— Էրզրումից գրում են արտասահմանի հայոց լրագիրներին, որ այնտեղի հայերը, զանազան խմբերի բաժանված՝ թշնամական յարաբերու-թեան մէջ են մտել և նոյն իսկ միմեանց դէմ մատնութիւններ են անում:

— Վանից գրում են, որ թիւրքաց կառավա-րութիւնը պարսկական սահմանազլխի հակողու-թիւնը յանձնել է թիւրքերին:

— «Պորտ» ամերիկական ընկերութիւնը անցեալ տարի մօտ 230 հազար դոլար է մսխել թիւրքաց Հայաստանում հաստատած իր միսոնարական գործունէութեան վրա:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Սուլթանը իր մեծ վիզերի միջոցով դատ սկսեց Բոյունիայի «La Rana» երգիծաբանական թերթի դէմ այն բանի համար, որ այդ թերթը յաճախ

ուզում է ծաղրական ձևով Արքու-Համիդի պատկե-րը: Դատարանը Բոյունիայում սուլթանի դանդաղ ուշադրութեան առնելով, դատապարտեց ծաղրա-կան թերթի խմբագրին երեք օրվայ բանտարկու-թեան և 150 լիրա տուգանքի:

— Ինֆլուէնցան արտասահմանում ահազին չափեր է ընդունում: Անտիլիպէսում ինֆլուէնցայից հիւանդացի են 40,000 բնակիչներ և օրական 70-ից մինչև 80 հոգի են մահանում: Այդ հիւան-դութիւնը վտանգաւոր բնաւորութիւն է ընդունել նոյնպէս Ժնեւում, ուր բոլոր հիւանդացիները լցված են հիւանդներով: Ինֆլուէնցան տարածվել է նոյնպէս ամբողջ Իտալիայում: Ժամանակը շատ զոհեր են լինում Տուրինում և Միլանում:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՄՆԱՍՏԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԵԼԳԻՐԱՎ, 27 զեկտեմբերի: Բաղարիան սաս-տիկ զինաւորում է: Աւստրիայից այդպեղ բեր-վում են մեծ քանակութեամբ պատերազմական մթերքներ, զինամիտ և ձիաներ: Չը նայած տե-ղական զեղեցիկ հունձին, բաղարները մեծ քա-նակութեամբ հաջահատիկ են գնում Սերբիայից:

ԳԱՀԻՐԷ, 27 զեկտեմբերի: Այսօր խէղիվ վախ-ճանկեց ինֆլուէնցայից:

ԹԵԼՆԱՆ, 27 զեկտեմբերի: Թէն ծխախոտի մեծաքանակութեան պատճառով նոր անկարգու-թիւններ չկան, բայց փողոցներում և հրապա-րակներում անցուդարձ են անում զինուորները: Մինչև այժմ խաղաղ մնացած նահանգներից պա-հանջել են նոր զինուորներ:

ԼՈՆԴՈՆ, 28 զեկտեմբերի: Ուէլլալում ձեր-բակալված են մի ֆրանսիացի, մի անգլիացի և մի կին, որոնք կապվածվում են ուսմանը շինելու մէջ: Սօցիալիստների կշռումը տեղի ունեցած խուզարկութիւնը ցոյց տուեց, որ վտանգաւոր դաւադրութիւն է եղել պատրաստվում, մասնակ-ցողներից միւրը ձերբակալված է Լոնդոնում:

ԳԱՀԻՐԷ, 28 զեկտեմբերի: Այսօր տեղի ունե-ցաւ խէղիվ թաղումը բոլոր միապետների ներ-կայացուցիչների և երկու հարիւր հազար ժողովուրդի ներկայութեամբ: Խէղիվ մարմինը դրված է մի հասարակ արաբական դադաղում:

ՎԻԵՆԱ, 28 զեկտեմբերի: Խիդիվ որդիքը, թաղածառանդ Աբաու-փաշան և Մահմէդ-է-Էնը, որոնք սովորում են այստեղ, հեռադրով եղիպտոս են կանչված:

ՄԱԴՐԻԴ, 28 զեկտեմբերի: Ֆինանսների մի-նիստը հրատարակում է մի զեկրետ, որով բա-ցատրում է թէ Անգլիան, Ռուսաստանը և Հոլ-լանդիան մինչև յունիսի 9-ը կօղակեն 1882 թվի ամենափոքր տարիքով:

ԳԱՀԻՐԷ, 28 զեկտեմբերի: Գոյաթիւն ունեցող ֆիրմաների հիման վրա, սուլթանը խէղիվ նշա-նակեց Աբաու-փաշային:

ՆԻՒԵՐՈՒ, 28 զեկտեմբերի: Կվէրի անխախտ հանքերում սարսափելի պայթիւն պատահեց. հանքերում եղած 350 բանուորներից միայն 143-ը աղաւթեցան:

ՊԱՐԻԶ, 28 զեկտեմբերի: Լրագիրները միա-ձայն այն կարծիքն են, որ Տէֆֆիլ-փաշան եղել է Անգլիայի խնայող ծառան, որը, երկու ա-ռիթից կօզովի եղիպտոսից իր զորքերը դուրս տանելը ուշադրելու համար: Մի քանի լրագիրներ այն կարծիքն են, որ այդ գործում շահ ունեցող պետութիւնները պէտք է նորից յարուցանեն եղիպտական հարցը: Թաղածառանդ Աբաու-փա-շան ֆրանսիաւոր է:

ՏԱԼԻՆ, 28 զեկտեմբերի: Նաւահանգստում կանգնած են երեք անգլիական պատերազմական նաւեր. բայց զօրքը դեռ փակ չէ իջել: Տանիքի շրջակայքում պատրաստակաւութիւն են յայտ-նում հպատակներ: Պատերազմական գործողու-թիւնները դադարեցրած են: Գրութիւնը աւելի լրացել է:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 29 զեկտեմբերի: Հրատարակված է Բարձրագոյն մանիֆեստ, որով յայտնվում է, թէ այն արդիւրը, որ դրված է օգոստոսի 1-ի և հոկտեմբերի 28-ի հրովարտականում յիշատակ-ված ապստամբները Ֆինլանդիայից արտահանելու վրա, տարածվում է նոյնպէս և ցորենի և դրանից պատրաստվող մթերքների վրա:—Գեկտեմբերի 21-ից մինչև 24-ը առանձին մասնաժողովի կա-տան մտել է 165,858 բուրդի փող, որի մէջ է և իշխանուհի խաւապովայի նուրբա 100,000 բուր-լին:

ՄԱԴՐԻԴ, 29 զեկտեմբերի: Խէրեսի շրջաններում հաւաքված անարխիստները, զինաւորվելով հա-

ցաններով, այս դիշեր յարձակվեցան քաղաքի վրա՝ թալանելու նպատակով: Ժամադարմները յարձա-կում արգելեցին, բայց հրացանաձգութիւնը տե-ւեց մինչև առաւօտ. հեծելազօրքը հալածեց ա-նարխիստներին. նրանց մեծ մասը բռնված են: ձերբակալվածները կենթարկվին զինուորական դատաստանին: Շարժումը ոչինչ քաղաքական բնա-ւորութիւն չունի երեք հոգի սպանված են և մի հոգի վիրաւորված: 30 մարդ ձերբակալված են. խաղաղութիւնը վերականգնված է:

ԳԱՀԻՐԷ, 29 զեկտեմբերի: Տեղացի բժիշկները չէին իմացել որ խէղիվ ունի թղբերի բորբո-քում և երկամուկների հիւանդութիւն: Մեռ-նելուց 17 ժամ առաջ կանչվեցան եւրօպական բժիշկներ. մինչև այդ ժամանակ տեղացի բժիշկ-ները սրսկում էին մօրֆի, որը միայն մշտա է պատճառել: Ասում են, որ տեղի կունենայ բժշ-կական խիստ քննութիւն:

ՊԱՐԻԶ, 29 զեկտեմբերի: Վաւարաններ հնա-րող Շուրերսկի ինքնասպանութիւն գործեց. բայց պատճառները յայտնի չեն:

ՐՈՍՏՈՎ (Գոնի վրա), 30 զեկտեմբերի: Այստեղ եկաւ ներքին գործերի միջնորդութեան առանձին յանձնարարութիւնների պաշտօնայ կարգով յար-մարացնելու գնդապետ Վէնգրիլի կարգադրութիւն-ները այն ընդհանուր ծրագրին, որը մշակված է սօ-վեթներին հայ մատակարարելու համար, այլ և այն երկաթուղային գնացքների շարժմանը, ո-րոնցով հայ է տեղափոխվում հիւսիսային կով-կասից:

ՍՈՏՈՒ, 30 զեկտեմբերի: Նախագրութեան մեծ միջոցներ են ձեռք առնված, ի նկատի ունենալով այն տեղեկութիւնները, որ ցոյց են տալիս թէ Սերբիայում ապրող գաղթականները մէջ ուժեղ ագիտացիա է լինում:—Բաղարական կա-ռավարիչները, հպատակելով ֆրանսիայի և Բ. Գրան պահանջներին, համաձայն են թղթակցից Շաղուրնին արտաբերու փոխարէն բաւարարութիւն տալ: Նրանք այժմ ընկնում են բաւարարութիւն տալու եղանակը:

ԼՈՆԴՈՆ, 30 զեկտեմբերի: Ուէլլի պրինցի մեծ որդին, Կլարիս, զուքը՝ ծանր հիւանդացի է ինֆլուէնցայով: Թղբերի բորբոքման հետ միա-սին:

ՊԱՐԻԶ 30 զեկտեմբերի: Մարկիզ Սօլբերի կուղարկի պետութիւններին շրջաբերական, որի մէջ կը յայտարարվի եղիպտոսի գրաւումը երկա-րացնելու անհրաժեշտութեան մասին:

ԼՈՆԴՈՆ, 30 զեկտեմբերի: Տէֆֆիլ-փաշայի մահը բոլորովին չի կերպարանախոյսի եղիպտոսի քաղաքական դրութիւնը: Հանգուցեալ խէղիվ բժշկութեան վերաբերմամբ բժշկական քննութիւն է սկսել առանձին յանձնաժողովը, որի նախա-դաշն է դիտար Բոգդեւու-փաշան:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ			
Գեկտեմբերի 30-ին			
Լօնդոնի վրա 10 ֆունտ արծիւ . . .	101	ր.	30
Բելիւնի վրա 100 մարկ . . .	49	>	70
Պարիզի վրա 100 ֆրանկ . . .	40	>	20
Ոսկի . . .	արծիւ . . .	8	> 18
Մաքսային կուպոններ . . .	163	>	75
Արծաթ . . .	1	>	19
Բորսային դիւնդաններ . . .	61 1/2	>	89 0
Պետ. բանկի 5 1/2 տոս 1 շրջանի . . .	102	>	62
— — — — — 2-րդ . . .	102	>	62
— — — — — 3-րդ . . .	—	>	—
— — — — — 4-րդ . . .	—	>	—
— — — — — 5-րդ . . .	—	>	—
— — — — — 6-րդ . . .	102	>	25
6 1/2 ոսկեայ բէնտա . . .	166	>	50
4 1/2 ոսկեայ փոխառութիւն . . .	153	>	—
Արեւելեան 5 1/2 փոխառ. 1-ին շրջ. . .	—	>	—
— — — — — 2-րդ . . .	102	>	25
— — — — — 3-րդ . . .	103	>	—
Ներքին 5 1/2 առաջին փոխառութ. . .	239	>	50
— — — — — երկրորդ . . .	219	>	—
Պետական. երկաթուղային բէնտա. . .	103	>	50
5 1/2 բէնտա . . .	—	>	—
4 1/2 ներքին փոխառութեան . . .	95	>	25
5 1/2 դրաւ. թղթ. ազն. կալ. բանկի . . .	102	>	12
Ազն. կալ. բանկի խաղաղութեան դրաւ. թղթ. . .	199	>	50
5 1/2 1/2 վկայակ. գիւղ. հող. բանկի. . .	104	>	75
4 1/2 1/2 դրաւական թղթի կալուած. . .	—	>	—
— — — — — փոխ. կրեդիտ. բնակ. . .	153	>	50
— — — — — թղթադ. . .	102	>	25
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ.			
Բնկերութեան օրվագրիներ. . .	100	>	75
Մոսկվայի քաղաք. օրվագրիներ. . .	100	>	25
Օղէսայի . . .	101	>	50
Թիֆլիսի . . .	—	>	—
Գրաւ. թղթ. Թիֆլիսի կալ. բանկի. . .	—	>	—
— — — — — փոխվային . . .	—	>	—
Ս. Պետերբուրգի բորսայի տրամադրութիւնը խաղաղ է:			

Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ ՄԱՍՈՒԼԻ ՏԱԿԻՅ

ՀԵՆՐԻԿ ԻՐԱՍԵՆԻ

ԴՕԿՏՈՐ ՇՏՕԿՄԱՆ

Կամ «Ժողովրդի լինումը»

Թարգ. Ս. ՀԱՆՈՒՄՆԱՆԻ, հրատարակող Վ. Հեյդուհանյան:

Գինը 80 կոպեկ, վաճառվում է Կենտրոնական գրադատական տնային:

1—2

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ Ֆրանսերենից հայերեն թարգմանված ԺՈՐԺ ՕՆԵԻ «ԴՕԿՏՈՐ ՌԱՄՕ» հեղինակությունը, մեծագույն 375 էջ: Գինը 80 կ: Թիֆլիսում վաճառվում է Կենտրոնական գրադատական տնային: Բազում հեղափոխական մտավորականներ և շուրջ մեր հայրենիքի գրադատական գրադատական տնային և Գաբրիելյան մանկապարտեզում: Ուրիշ քաղաքներում գրադատական տնային: Վ. Հեյդուհանյան: Գինը 1 ռ:

3—6

Ա Տ Ա Մ Ն Ա Ր Ո Յ Ժ

ՀԱՄԱՐԱՍՊ ՅՈՎԱԿԻՄՆ

Օ Ր Բ Ե Լ Ի

Սոցիալական փողոց, սեփական տանը № 14—16

ԸՆԴՈՒՆՈՒՄ Ե ՀԻՒԱՆԴՆԵՐԻՆ } առաւօտեան 8 ժամից մինչև 10 ժ.
և երեկոյեան 4 ժամից մինչև 6 ժ.
Կիրակի և տոն օրերին առաւօտեան 8 ժամից մինչև 2 ժամ կէսօրից յետոյ: 4—150

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԻՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԲՈՇԿԱՊԵՏ Բ. ՆԱԽԱՍԱՐԻԱՆԻ

(Կուկիա, վարչական արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից:

ԱՌԱՐՈՏՆԵՐԸ

- Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԻԱՆԻ—11—12 ժ. վարչական (և առաւօտեան) սեփական և աչքապահ:
- Գ. Գ. ՐՈՒԿԻՍԿԻ—10—11 ժ. ներքին, երեկոյեան և կանանց ց.
- Կ. Բ. ԲՈՒԿԻՍԿԻ—11—12 ժ. կանանց և երեկոյեան ց.
- Մ. Գ. ՔԱՆԱՆԵԱՆԻ—12—12½ ժ. կանանց ց. և մանկաբարձութեան:
- Ի. Գ. ՊՐՈՏԱՍԵՎԻԻ—12—1 ժ. ակնաբու, կոկորդի և թոքի ց.
- Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏՆԱՆԻ—12½—1 ժ. ներքին և երեկոյեան ց.

ԵՐԵՎԱՆԵՐԸ

- Ա. Բ. ԱԼԵԿՍԵՅԵՎԻ—5—6 ժ. ներքին ց. և երեկոյեան և կանանց ց.
- Ա. Մ. ՓՈՒԿԻՍԿԻ—5—6 ժ. երեկոյեան և ներքին ց.
- Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԻԱՆԻ—6—7 ժ.
- Ա. Ա. ԳԱՐՍԻԱՆԻ—5—6½ ժ. կանանց ց. և կոկորդի և թոքի ց.
- Վճար—50 կ: Համախառն (կանանց ց. և մանկաբարձութեան) համար առանձին:

3—52 (5)

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

Ե Վ Ե Լ Ի Ն Ա

ԳՐԻԳՈՐ ԱՐԹՐՈՒՆԻՍԻ ՎԷՅ (հոգեբանական էություն)

Գինը 50 կոպեկ (պատի ծախսով)

Մատուցում է «Մշակի» խմբագրատանը, Կենտրոնական և Խորհրդային գրադատական տնային և Միջազգային կամուրջի վրա գտնվող Յոզֆանսոնի գրադատական տնային:

13—20

ՆԱԽԱՋԳՈՒՇՈՒԹԻՒՆ

ՊԱՊԻՐՈՍՆԵՐԻ ԹՂԹԻ ՏԵՏՐԱԿՆԵՐԻ ԵՒ ԳԻԼՁԱՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆ

ՍԵՐԳԵՅ ՄԻԽԱՅԻԼՈՎԻՉ ԱՆՆԱՆՈՎԻ

Ձգույնում է իր բոլոր աշխատանքները, որ վերջին ժամանակներս, աչքի առջև ունենալով հայրենի պահանջը իր աշխատանքներին և նրանց բարձր արժանաւորութիւնը, հանդէս եկան բազմաթիւ կեղծումներ, և մինչև անգամ «ԱՆՈՎ» աղբյուրում նմանողութեան է ենթարկւում, ապրում է մի և նոյն տառերով ԱՆՈՎ: Բայց: Հասկանալի է, որ այդ անվում է այն նպատակով, որ Անանովի լաւ տեսակի աշխատանքները հետ միաժամանակ ծախվին և իրանց ստոր տեսակի աշխատանքները, որոնք Անանովի ֆաբրիկայի ապրանքների հետ ոչինչ նմանութիւն չունեն: Թէև այդ տեսակի նմանողութիւնները և ապագայում են, որ Անանովի աշխատանքները ամեն միջոցով իրանց զարման, սակայն չը կամենալով որ հասարակութիւնը մոլորութեան մէջ ընկնի և վատ ապրանքներ ձեռք բերէ, Անանովի ֆաբրիկան զգուշացնում է, որ իր թղթերի իւրաքանչիւր թերթը կրում է ֆիրմայի զրուստը և պէտք է պահանջել, որ բոլոր էտիկետների վրա ստորագրված լինի Սերգեյ Անանովի ստորագրութիւնը:

ՆԱԽԱՋԳՈՒՇՈՒԹԻՒՆ

Անանովի գործարանի պապիրոսների թղթի տեսակները և գիղաները պատրաստվում են ֆրանսիական ամենալաւ և անվաւ թղթից (արժանաւորութիւնը, հանդէս եկան բազմաթիւ կեղծումներ, և մինչև անգամ «ԱՆՈՎ» աղբյուրում նմանողութեան է ենթարկւում, ապրում է մի և նոյն տառերով ԱՆՈՎ: Բայց: Հասկանալի է, որ այդ անվում է այն նպատակով, որ Անանովի լաւ տեսակի աշխատանքները հետ միաժամանակ ծախվին և իրանց ստոր տեսակի աշխատանքները, որոնք Անանովի ֆաբրիկայի ապրանքների հետ ոչինչ նմանութիւն չունեն: Թէև այդ տեսակի նմանողութիւնները և ապագայում են, որ Անանովի աշխատանքները ամեն միջոցով իրանց զարման, սակայն չը կամենալով որ հասարակութիւնը մոլորութեան մէջ ընկնի և վատ ապրանքներ ձեռք բերէ, Անանովի ֆաբրիկան զգուշացնում է, որ իր թղթերի իւրաքանչիւր թերթը կրում է ֆիրմայի զրուստը և պէտք է պահանջել, որ բոլոր էտիկետների վրա ստորագրված լինի Սերգեյ Անանովի ստորագրութիւնը:

9—10

ԳԼԿԵՐԱԿՈՒԹԻՒՆ ԱՐԻԻՆԱԳՈՐԾՆԵՐԻ ՍԱՐՊԻՆԿԱ ԱՐԻԻՆԻՒՄ ՍԱՐԱՏՕՎՈՒՄ

ՍԵՐՏՈՆ 1892 ԹԻ — ՍԱՐՊԻՆԿԱ — ՍԵՐՏՈՆ 1892 ԹԻ

Ձեռքի հիւսուածք, սեփական պատրաստութեան Պարիզի վերջին մոդային նմուշներին համեմատ

ՆՈՐ — «ՍԱՐՊԻՆԿԱ-ԲԵԼԻԵՅ» — ՀԻՍՏՈՒՄԲԻ

Վաճառվում է ամբողջ կտորներով և արշիններով, և ուղարկվում է Ռուսաց կայսրութեան բոլոր քաղաքները: Նմուշներ չբեղ «Արմոնի» ուղարկվում են 42 կոպեկով, պատույն մարկաներով: Գրադատութիւն ռուսաց լեզուով: ՀԱՍՏԻՆ. Саратовъ—Товариществу Сарпинокъ.

8—10 (Կ. շ.)

ԿԻՆ ԱՏԱՄՆԱԲՈՅԺ Մ. Ր. ՀԵՉՈՒԲԵԱՆ

Ընդունում է Հիւանդներին ամեն օր, 9 ժամից առաւօտեան մինչև 5 ժամ կէսօրից յետոյ, Գոյովնիսկի պրոսպեկտ, տուն Անանովի, № 22.

10—15

Բացված է առաջին 1892 թ. ըստ հրատարակութիւնը

Պատկերազարդ «ԱՂԲԻՐ» ամսագրի և «ՏԱՐԱՋ» շաբաթաթերթի

Կը հրատարակվի նոյն ծրագրով, ուղղութեամբ և աշխատակիցներին մասնակցութեամբ «Աղբիւր» ամսագիրը լոյս է տեսնում իւրաքանչիւր ամիս, իսկ «Տարաջ» շաբաթաթերթը՝ ամեն կիրակի, 1—2 ապագրական թերթ:

«Աղբիւր» ամսագրի ծրագիրը:

Ա. Մանկական բաժին. Մանրակերպ, զրոյցներ, հեքիաթներ, ճանապարհորդութիւններ, կենսագրութիւններ, բանաստեղծութիւններ, գիտութիւն և արուեստ: Նոր-լուրեր. այլ և այլք:

Զուարճալիք—Մանկական ֆրէզկան, չախմատի և այլ խաղեր, բերդաներ, թուղթանակա խնդիրներ, անկեղծանքներ, հանրութեան, շուտակալութեան, երգեր նոտաներով:

Բ. բաժին. Կրթութեան և դաստիարակութեան վերաբերեալ յօդուածներ և տեղեկութիւններ: Առաջարկութիւններ. խորհուրդներ: Մատենախոսութիւն և նոր գրքեր: Խառն լուրեր, պատասխաններ, յայտարարութիւններ:

«Տարաջի» ծրագիրը

Կեղաբանական և գիտութիւն: Պատմական և ժամանակակից վեպեր, պատկերներ, թատերական գրութեան: Բանաստեղծութիւններ: Գիտաբանական: Գիտութիւն և կենսագրութիւն: Կար, ձեռ, ձեռագործ և ամեն նորութիւն արհեստների վերաբերեալ: Տնային արդիւնաբերութիւն, տնտեսութիւն: Հանապարհորդութիւն և արկածներ: Երաժշտութիւն և թատեր: Ժամանակագրական լուրեր, տեղեկութիւններ, յօդուածներ և այլն: Ֆէլիետոն, ծաղր, առած, կատակ: Շախմատի և այլ խաղեր, բերդան, հարցեր, խորհուրդներ: Աղբիւրը, պատասխաններ, յայտարարութիւններ:

«Աղբիւր» ամսագրի և «Տարաջ» շաբաթաթերթի առաջին 1892 թ. պրէմիաները

«Աղբիւրի» տասնամեակի առիթով

51 Բաժանորդները կը ստանան յետոյ և մէկ պրէմիա 51 «Աղբիւրի» և «Տարաջի» մի և նոյն հասցեով բաժանորդ գրվող մինչև յունիս ամիսը կը ստանայ ու թ. № (1—8) պրէմիաները, իսկ Մանկագրական հաւաքածուն յուլիսին և «Աղբիւրի» տասնամեակը ղեկավարներին: Այնուհետև մնացած 43 ընծաները:

«Աղբիւրի» այն բաժանորդը, որը «Տարաջ» չի ստանայ, նրան չի ուղարկվի և 12 հատ Յիսուսեան Գաղթեա. Գեղարուեստական ալբոմ Ս. Էշմիաճին և իր չընկալ սրբալայրերը. Նորնորի կաթողիկոսի և հանրուցեալ հանձարեղ դերասան Ալաւմանի պատկերները, փարիզու մոդաները, «Նրա մայրը» վեպը և պատկերազարդ ուղեցոյց Կովկ. և հանր. Ջրերի:

Միւսիս «Տարաջ» ստացողին, բացի Պարիզի մոդաներից, ուրիշ ընծայ չի ուղարկվի: Ապառիկ բաժանորդագրութիւն չէ ընդունվում: Գեղանկարի 15-ից ուշ բաժանորդ գրվողին խմբագրութիւն պարտական չէ, եթէ մինչև յունիս 1-ը ուղարկված չը լինեն պրէմիաները:

«Աղբիւր» տարեկան բաժանորդագրին 3 ռ. 28 կ. (10 ֆր.), իսկ «Տարաջին» 6 ռ. (20 ֆր.) «Աղբիւր» և «Տարաջ» մի և նոյն հասցեով բաժանորդ գրվողը ստանում է 51 պրէմիա, իսկ միայն «Աղբիւր» բաժանորդը՝ 31 պրէմիա: Տարաջն առանձին պրէմիաներ չունի:

Հասցէն՝ Тифлис. Редакция журнала «Агбуры» կամ «Таражъ», Արտասահմանից Tiflis (Caucase) Rédaction «Agbur» et «Taraz»:

3—3

Խմբագիր-հրատարակիչ Տիգրան Նազարեանց



ԲԱՐՁՐԱԳՈՅԻ ԹՈՅԼԱՏՐԱՎԱՆ, 1891 ԹԻ ՆՈՅՄԵՐՆԵՐԻ 18-ԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԽԱՂ՝ ՅՕԳՈՒՑ 1891 ԹԻ ԱՆՊԱՐԱՐՈՒԹԻՒՆՑ ՎՆԱԿԱՆ ԱԶԳԱՐԿԱՊԻԹԵԱՆ:

Այդ վիճակախաղի արդիւնքը, Նորին կայսերական Մեծութեան կարգադրութեամբ, կը յատկացվի բարեգործական հաստատութիւններին միջոցով Ռուսաստանի տոկաւներին:

Տոմարի տարածվող տեղի կունենայ 1891 թ. Նոյեմբերի 18-ին կայացած Բարձրագոյն հաստատութիւն գտած կանոնների համաձայն:

Բաց կը թողնվի ընդամենը 1,200,000 տոմսակ սերիաներով, իւրաքանչիւրում 100-ական տոմսակ, ընդամենը 12,000 սերիա № 1-ից մինչև № 12,000:

Իւրաքանչիւր տոմսակ բաժանված է հինգ կուպոնների: Իւրաքանչիւր տոմսակն արժէ 5 ռուբլի, իւրաքանչիւր կուպոնը արժէ 1 ռուբլի: Ով որ տանէ տոմսակը, նա կը ստանայ ամբողջ գումարը: Իսկ որ և ի տոմսակին պատկանող կուպոն տանողը՝ կը ստանայ տարած գումարի 1/5 մասը:

Տանող տոմսերի թիւն է 2,928, իսկ ամբողջ տանելի գումարները՝ 1,200,000 ռուբլի, այսպէս՝

1 տոմսակ	100,000 ռ.	100,000 ռ.
1 >	50,000 >	50,000 >
1 >	25,000 >	25,000 >
10 >	10,000 >	100,000 >
15 >	5,000 >	75,000 >
100 >	1,000 >	100,000 >
200 >	500 >	100,000 >
2,600 >	250 >	650,000 >

Գումարը . . . 2,928 տանող տոմսակ, ընդամենը . 1,200,000 ռուբլի:

Խաղարկութեան ժամանակամիջոցը կը յայտարարվի իր ժամանակին:

Տոմսակների և առանձին կուպոնների վաճառքը տեղի կունենայ պետական բանկում, նրա գրասենյակներում և բաժնիներում, բանկի ինսպեկտորական կասսայի բաժնիներում, Պետերբուրգում և Մոսկվայում, այսուհետև Կազանի և Կարմիր խաչի վարչութիւններում, երկաթուղիների կայարանների կասսաներում, մասնաւոր բանկերում և բանկային գրասենյակներում և այլն:

Թէ կը կը սկսվի տոմսերի վաճառքը իւրաքանչիւր քաղաքում այդ մասին կը յայտարարվի առանձին, լրելով այն տեղերը, ուր տեղի կունենայ այդ վաճառքը:

Պետերբուրգ, 1891 Նոյեմբեր:

Բարեգործական վիճակախաղի մասնաժողով:

3—8

ՄԻՋՈՑ ԽԱՐԲՈՒՄԻ ԳԻՄ

«Ольфакториумъ Нудилинъ» ԲՇՀԻԿԱՆ ԳԵՎԱՐԱՄԱՆՆԱԿԻ ԹՅՂԱՄԱՐԻԱԾ

М. Л. ЖИРМУНСКАГО.

ՕԼՖԱԿՏՈՐԻՍՄ ՆՈՒԴԻԼԻՆ

Մ. Լ. ԺԻՐՄՈՒՆՍԿԻՈՒ

Ճախվում է 40 կոպեկով

Կեղադործական Ապրանքների Վաճառման Կովկասեան Ընկերութեան մէջ Թիֆլիսում:

9—40

Մ. Գ. ՅԵՅՏԼԻՆԻ

ՃԱՄԱՅՈՑՆԵՐԻ ՄԱԿԱՆՆԵՐ

ՕՊՏԻՍԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆԻԲԸ


Պալատի այգու դիմաց, անկիւնի մագաղանում, ստացված է մեծ ընտրութիւն՝ ոսկեայ, նոր ոսկեայ, նիկելայ, պողպատեայ և կրիայի ոսկորից ԱՎՆՈՑՆԵՐ, ՊԵՆՏԵՆՆԵՐ և ԼՈՐՆԵՆՆԵՐ: Թատրոնական և դաշտային ԲԻՆՈՎԻՆԵՐ, ՋԵՐՄԱՆԱՎԵՐ, թէ սենեականների, թէ դուրս կախելու և թէ վանանների համար վերապատեղված և վկայական ունեցող ՄԱԿԱՆՆԱՎԵՐ, չերմաշափեր: Լորնէի և պենտէի համար ոսկեայ, արծաթեայ, նոր-ոսկեայ շղթաներ, նմանապէս մետաքսեայ և մետաղական թելեր:

Ակնոցներ և պենտէներ արվում են նմանապէս բժշկաների պատուէրով:

Մագաղանում յանձն են առնում նմանապէս փաշած իրերի նորոգելը և ապագիւնների դնելը:

ԳՆԵՐԸ ամենաշափաւոր կն:

37—50 (5)



Типографія Канцел. Главнотач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. 430.